ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ -17/22» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատող հանձնաժողովի նիստ

(Տեսագրման և վերարտադրման սարքավորում)

ք. Երևան 06 դեկտեմբերի 2017թ. ժամը 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Պետրոսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատում:
3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:
4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է ՝ կողմ 5, դեմ 0:

2.ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատում

2.1 ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:

3.1 Ըստ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջների, սահմանված կարգով և ժամկետում «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ մասնակիցը գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն Հրավերի տեքստի հավելված N 6 և 6.1-ի, որի համապատասխանությունը հրավերի պահանջներին հաստատվել է գնահատող հանձնաժողովի անդամների կողմից:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ -17/22» ծածկագրով գնման ընթացակարգի I տեղ զբաղեցրած մասնակից «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ -ին ճանաչել ընդրված մասնակից:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետ կիրառելի չէ:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

4.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	_____	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	_____	Թ. Զաքարյան
	_____	Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	_____	Ա. Իսկանդարյան
	_____	Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Ա. Պետրոսյան